**ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՑԱՆՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ**

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 6՝ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ, ՄԱՐԱԼԻԿ, ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ, ԼԱՆՋԻԿ, ՔԱՐԱԲԵՐԴ, ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ /ԷԼԵԿՏՐԱԽՆԱՅՈՂ ԼԵԴ ՏԵՍԱԿԻ ԼՈՒՍԱԿԻՐՆԵՐՈՎ/ ԱՆՑԿԱՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ)

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/24

ք. Մարալիկ «8» Հոկտեմբեր 2019 թ.

«ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանը», ի դեմս Ա. Գևորգյանի, որը գործում է «ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի թվով վեց՝ Գուսանագյուղ, Մարալիկ, Սառնաղբյուր, Լանջիկ, Քարաբերդ, Ձիթհանքով բնակավայրերի արտաքին լուսավորության ցանցի /էլեկտրախնայող ԼԵԴ տեսակի լուսակիրներով/ անցկացման» աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **20.12.2019:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ______ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի

4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 21 960 000 (քսանմեկ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 3 660 000 (երեք միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[33] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

---

[33] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[34] : Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[35] :

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

---

[34] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[35] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[38]

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Անի համայնքապետարան | <<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ |
| ք. Մարալիկ, Մադաթյան 1 | ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Կույբիշևի 49 |
| <<Կենտրոնական գանձապետարան>> | <<Ինեկոբանկ>> Գյումրի մ/ճ |
| ՀՎՀՀ 05546057 | ՀՎՀՀ 05504189 |
| Հ/Հ 900492171088 | h/h 2051222031231001 |
| ---------------------------------- | ---------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

[38] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված թիվ 1
« 8 » հոկտեմբեր 2019թ. կնքված
ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/24 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

## ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի թվով 6 գյուղերի` Գուսանա,Մարալիկ,Սառնաղբյուր,Լանջիկ ,Քարաբերդ,Ջիթանքով բնակավայրերի գիշերային լուսավորությանցանցի /էլեկտրախնայող ԼԵԴ տեսակի լուսակիրներով/անցկացման աշխատանքային նախագիծ

## Ծավալաթերթ հաշվարկ /Ведомость- расчет/

**Շինարարության արժեքը** **21 960,000 հազ.դրամ**

| N | Աշխ-ի և ծախսերի շիֆրը | | Աշխատանքների անվանումը | չ.մ.մ/е | չ.մ. /ед.измерения/ | Քանակ /кол-во/ | Ընդհանուրը /հազ.դրամ/ всего тыс. Драмов |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | Гусанагюх | Գուսանա | | | | |
| | | **Строительные работы** | *Շինարարական աշխատանքներ* | | | | |
| 1 | 33--621 | Уст-ка металлических опор d-108*4мм Н=7м | Պողպատե հենասյուների տեղադրում d-108*4մմ H=7մ | հատ | 33,0 | 27,751 | 915,783 |
| 2 | 1--961 | Разр-ка грунта III группы вручную /в ямах/ | III կարգի բնահողի մշակում /փոսորակում/ | խոր.մ | 7,43 | 2,072 | 15,385 |
| 3 | 310-3 տ.մ.կ 29 г23--226 | Погрузка грунта вручную на а/самосвалы с перевозкой на растояние до 3км | Մշակված գրունտի բարձում ձեռքով ավտոինքնաթափերի վրա և տեղափոխում 3կմ | տ | 13,37 | 1,352 | 18,069 |
| 4 | 8--10 | Устр-во песчаной подушки под фундаменты 0.025куб.м*60 шт | Ավազե բարձիկ հիմքերի տակ 0,025*60 | խոր.մ | 0,83 | 2,253 | 1,859 |
| 5 | 33--764 | Бетонирование фундаментов опор бетоном В-12.5 | Հենասյուների հիմքերի բետոնացում B12.5 դասի բետոնով | խոր.մ | 7,43 | 20,723 | 153,972 |
| 6 | | Арматура 12А500с | Ամրան 12А500с | տ | 0,006 | 405,901 | 2,354 |
| 7 | 8--409-3 | Затягивание провода сеч 1*16кв.мм медными жилами марки ПВ. | ПВ 1*16քառ.մմ հատ.պղնձե ջղերով հաղորդալարի անցկացում | 100 գծ.մ | 0,5 | 15,948 | 7,974 |
| 8 | 8--150-4 | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | Մալուխի անցկացում հենասյուների վրայով /ճոպանով/ СиП-4 3*16 | 100 գծ.մ | 12 | 30,454 | 365,448 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 8--149-1 | Затягивание провода сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | АВВГ 3*2.5ալյումինե ջղերով մալուխի անցկացում | 100 գծ.մ | 0,7 | 10,362 | 7,253 |
| 10 | 8--366-1 | Уст-ка поперечников из угловой стали 50*50*5мм L-0.6м | Լայնակների տեղադրում անկյունային պողպատից L-50*50*5մմ L-0.6մ | հատ | 33 | 2,613 | 86,229 |
| 11 | | Сталь угловая 50*50*5мм L-0.8м | Անկյունակ 50*50*5, L-0.8մ | հատ | 33 | 1,352 | 44,616 |
| 12 | | Болты шайбы гайки M16 | Հեղյուս մանեկ ՊնդօղակM 16 | հատ | 33 | 0,063 | 2,079 |
| 13 | | Штырь Ш1Б-К-25 | Ցցաձող Ш1Б-К-25 | հատ | 66 | 0,451 | 29,766 |
| 14 | | Изолятор ТФ-20-01 | ՄեկուսիչТФ-20-01 | հատ | 66 | 0,270 | 17,820 |
| 15 | 8--363-1 | Крепление одноветвевых консолей из труб d-48*3мм L-1.8մ | Բարձակների տեղադրում միաճյուղ 48*3մմ խողովակներից L-1.8մ /միաճյուղ | հատ | 33 | 14,236 | 469,788 |
| 16 | 8--594-1 | Уст-ка светодиодных светильников 40вт для наружного освешэщения | Արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատու 40վտ | հատ | 33 | 19,574 | 645,945 |
| 17 | 15--614 | Окраска опор за 2 раза /только материал/ | Հենասյուների 2 անգամ յուղաներկման նյութերգում 1 հատի | քառ.մ | 72,53 | 0,360 | 26,111 |
| 18 | | Ст-сть кабеля сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | АВВГ 3*2,5հատ մալուխ ալյումինե ջղերով | գծ.մ | 70 | 0,090 | 6,300 |
| 19 | | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | СиП-4 3*16հատ մալուխ | գծ.մ | 1200 | 0,631 | 757,200 |
| 20 | | Ст-сть провода марки ПВ 1*16մմ | Հաղորդալար ПВ 1*16մմ | գծ.մ | 50 | 0,811 | 40,550 |
| 21 | | Зажим для соединения кабелей | Մալուխների միացմա սեղմակ | հատ | 33 | 0,014 | 0,462 |
| 22 | | Крепежные элементы для крепления кабелей | Մալուխների ամրացման ամրակ | հատ | 66 | 0,180 | 11,880 |
| 23 | | Заглушка отверстия верха стальной опоры d=110*4мм | Հենասյունի վերնամասի անցքի փակում d=110*4մմ | հատ | 33 | 0,180 | 5,940 |
| 24 | 8--418-1 | Труба гофрированная d=20мм | Ծալքավոր մեկուսիչ խողովակ d=20մմ | գծ.մ | 59,4 | 0,360 | 21,384 |
| | | Итого | Ընդամենը | | | | 3 654,167 |
| | | Маралик | Մարալիկ | | | | |

| | | Строительные работы | Շինարարական աշխատանքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 25 | 33--621 | Уст-ка металлищеских опор d-108*4мм H=7м | Պողպատե հենասյուների տեղադրում d-108*4մմ H=7մ | հատ | 27,0 | 27,751 | 749,277 |
| 26 | 1--961 | Разр-ка грунта III группы вручную /в ямах/ | III կարգի բնահողի մշակում /փոսորակում/ | խոր.մ | 6,08 | 2,072 | 12,587 |
| 27 | 310-3 տ.մ.կ 29 г23--226 | Погрузка грунта яручную на а/самосвалы с перевозкой на растояние до 3км | Մշակված գրունտի բարձում ձեռքով ավտոինքնաթափերի վրա և տեղափոխում 3կմ | տ | 10,94 | 1,352 | 14,784 |
| 28 | 8--10 | Устр-во песчаной подушки под фундаменты 0.025куб.м*60 шт | Ավազե բարձիզ հիմքերի տակ 0,025*60 | խոր.մ | 0,68 | 2,253 | 1,521 |
| 29 | 33--764 | Бетонирование фундаментов опор бетоном B-12.5 | Յենասյուների հիմքերի բետոնացում B12.5 դասի բետոնով | խոր.մ | 6,08 | 20,723 | 125,892 |
| 30 | | Арматура 12A500c | Ամրան 12A500c | տ | 0,005 | 405,901 | 1,948 |
| 31 | 8--366-1 | Уст-ка поперечников из угловой стали 50*50*5мм L-0.6м | Լայնակների տեղադրում անկյունային պողպատից L-50*50*5մմ L-0.6մ | հատ | 27 | 2,613 | 70,551 |
| 32 | | Сталь угловая 50*50*5мм L-0.8м | Անկյունակ 50*50*5, L-0.8մ | հատ | 27 | 1,352 | 36,504 |
| 33 | | Болты шайбы гайки M16 | Յեղյուս մանեկ ՊնդօղակM 16 | հատ | 27 | 0,063 | 1,701 |
| 34 | | Штырь Ш1Б-К-25 | Ցցաձող Ш1Б-К-25 | հատ | 54 | 0,451 | 24,354 |
| 35 | | Изолятор ТФ-20-01 | Մեկուսիչ ТФ-20-01 | հատ | 54 | 0,270 | 14,580 |
| 36 | 8--363-1 | Крепление одноветвевых консолей из труб d-48*3мм L-1.8մ | Բարձակների տեղադրում միաճյուղ 48*3մմ խողովակներից L-1.8մ /միաճյուղ | հատ | 27 | 14,236 | 384,372 |
| 37 | 8--409-3 | Затягивание провода сеч 1*16кв.мм медными жилами марки ПВ. | ПВ 1*16քառ.մմ հատ.պղնձե ջղերով հաղորդալարի անցկացում | 100 գծ.մ | 0,7 | 15,948 | 11,164 |
| 38 | 8--150-4 | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | Մալուխի անցկացում հենասյուների վրայով /ճոպանով/ СиП-4 3*16 | 100 գծ.մ | 9 | 30,454 | 274,086 |
| 39 | 8--149-1 | Затягивание провода сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | АВВГ 3*2.5ալյումինե ջղերով մալուխի անցկացում | 100 գծ.մ | 0,6 | 10,362 | 6,217 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 40 | 8--594-1 | Уст-ка светодиодных светильников 40вт для наружного освешэщения | Արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատու 40վտ | հատ | 27 | 19,574 | 528,500 |
| 41 | 15--614 | Окраска опор за 2 раза /только материал/ | Հենասյուների 2 անգամ յուղաներկման նյութերգում 1 հատի | քառ.մ | 59,34 | 0,360 | 21,362 |
| 42 | | Ст-сть кабеля сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | АВВГ 3*2,5հատ մալուխ ալյումինե ջղերով | գծ.մ | 60 | 0,090 | 5,400 |
| 43 | | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | СиП-4 3*16հատ մալուխ | գծ.մ | 900 | 0,631 | 567,900 |
| 44 | | Ст-сть провода марки ПВ 1*16մմ | Հաղորդալար ПВ 1*16մմ | գծ.մ | 70 | 0,811 | 56,770 |
| 45 | | Зажим для соединения кабелей | Մալուխների միացմա սեղմակ | հատ | 27 | 0,014 | 0,378 |
| 46 | | Крепежные элементы для крепления кабелей | Մալուխների ամրացման ամրակ | հատ | 54 | 0,180 | 9,720 |
| 47 | | Заглушка отверстия верха стальной опоры d=110*4мм | Հենասյունի վերնամասի անցքի փակում d=110*4մմ | հատ | 27 | 0,180 | 4,860 |
| 48 | 8--418-1 | Труба гофрированная d=20мм | Ծալքավոր մեկուսիչ խողովակ d=20մմ | գծ.մ | 48,6 | 0,360 | 17,496 |
| | | Итого | Ընդամենը | | | | 2 941,925 |
| | | Сарнагбюр | **Սառնաղբյուր** | | | | |
| | | **Строителные работы** | ***Շինարարական աշխատանքներ*** | | | | |
| 49 | 33--621 | Уст-ка металлищеских опор d-108*4мм H=7м | Պողպատե հենասյուների տեղադրում d-108*4մմ H=7մ | հատ | 25,0 | 27,751 | 693,775 |
| 50 | 1--961 | Разр-ка грунта III группы вручную /в ямах/ | III կարգի բնահողի մշակում /փոսորակում/ | խոր.մ | 5,63 | 2,072 | 11,655 |
| 51 | 310-3 տ.մ.կ 29 г23--226 | Погрузка грунта яручную на а/самосвалы с перевозкой на растояние до 3км | Մշակված գրունտի բարձում ձեռքով ավտոինքնաթափերի վրա և տեղափոխում 3կմ | տ | 10,13 | 1,352 | 13,689 |
| 52 | 8--10 | Устр-во песчаной подушки под фундаменты 0.025куб.м*60 шт | Ավազե բարձիգ հիմքերի տակ 0,025*60 | խոր.մ | 0,63 | 2,253 | 1,408 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 53 | 33--764 | Бетонирование фундаментов опор бетоном В-12.5 | Հենասյուների հիմքերի բետոնացում B12.5 դասի բետոնով | խոր.մ | 5,63 | 20,723 | 116,567 |
| 54 | | Арматура 12А500с | Ամրան 12A500c | տ | 0,004 | 405,901 | 1,802 |
| 55 | 8--366-1 | Уст-ка поперечников из угловой стали 50*50*5мм L-0.6м | Լայնակների տեղադրում անկյունային պողպատից L-50*50*5մմ L-0.6մ | հատ | 25 | 2,613 | 65,325 |
| 56 | | Сталь угловая 50*50*5мм L-0.8м | Անկյունակ 50*50*5, L-0.8մ | հատ | 25 | 1,352 | 33,800 |
| 57 | | Болты шайбы гайки М16 | Հեղյուս մանեկ ՊնդօղակM 16 | հատ | 25 | 0,063 | 1,575 |
| 58 | | Штырь Ш1Б-К-25 | Ցցաձող Ш1Б-К-25 | հատ | 50 | 0,451 | 22,550 |
| 59 | | Изолятор ТФ-20-01 | Մեկուսիչ ТФ-20-01 | հատ | 50 | 0,270 | 13,500 |
| 60 | 8--363-1 | Крепление одноветвевых консолей из труб d-48*3мм L-1.8մ | Բարձագների տեղադրում միաճյուղ 48*3մմ խողովակներից L-1.8մ /միաճյուղ | հատ | 25 | 14,236 | 355,900 |
| 61 | 8--409-3 | Затягивание провода сеч 1*16кв.мм медными жилами марки ПВ. | ПВ 1*16քառ.մմ հատ.պղնձե ջղերով հաղորդալարի անցկացում | 100 գծ.մ | 0,5 | 15,948 | 7,974 |
| 62 | 8--150-4 | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | Մալուխի անցկացում հենասյուների վրայով /ճոպանով/ СиП-4 3*16 | 100 գծ.մ | 8 | 30,454 | 243,632 |
| 63 | 8--149-1 | Затягивание провода сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | АВВГ 3*2.5ալյումինե ջղերով մալուխի անցկացում | 100 գծ.մ | 0,5 | 10,362 | 5,181 |
| 64 | 8--594-1 | Уст-ка светодиодных светильников 40вт для наружного освешэщения | Արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատու 40վտ | հատ | 25 | 19,574 | 489,352 |
| 65 | 15--614 | Окраска опор за 2 раза /только материал/ | Հենասյուների 2 անգամ յուղաներկման նյութերգումն 1 հատի | քառ.մ | 54,95 | 0,360 | 19,782 |
| 66 | | Ст-сть кабеля сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | АВВГ 3*2,5հատ մալուխ ալյումինե ջղերով | գծ.մ | 50 | 0,090 | 4,500 |
| 67 | | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | СиП-4 3*16հատ մալուխ | գծ.մ | 800 | 0,631 | 504,800 |
| 68 | | Ст-сть провода марки ПВ 1*16մմ | Հաղորդալար ПВ 1*16մմ | գծ.մ | 50 | 0,811 | 40,550 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 69 | | Зажим для соединения кабелей | Մալուխների միացման սեղմակ | հատ | 25 | 0,014 | 0,350 |
| 70 | | Крепежные элементы для крепления кабелей | Մալուխների ամրացման ամրակ | հատ | 50 | 0,180 | 9,000 |
| 71 | | Заглушка отверстия верха стальной опоры d=110*4мм | Հենասյունի վերնամասի անցքի փակում d=110*4մմ | հատ | 25 | 0,180 | 4,500 |
| 72 | 8--418-1 | Труба гофрированная d=20мм | Ծալքավոր մեկուսիչ խողովակ d=20մմ | գծ.մ | 45 | 0,360 | 16,200 |
| | | Итого | Ընդամենը | | | | 2 677,367 |
| | | Ланджик | **Լանջիկ** | | | | |
| | | **Строительные работы** | ***Շինարարական աշխատանքներ*** | | | | |
| 73 | 33--621 | Уст-ка металлищеских опор d-108*4мм H=7м | Պողպատե հենասյուների տեղադրում d-108*4մմ H=7մ | հատ | 25,0 | 27,751 | 693,775 |
| 74 | 1--961 | Разр-ка грунта III группы вручную /в ямах/ | III կարգի բնահողի մշակում /փոսորակում/ | խոր.մ | 5,63 | 2,072 | 11,655 |
| 75 | 310-3 տ.մ.կ 29 г23--226 | Погрузка грунта яручную на а/самосвалы с перевозкой на растояние до 3км | Մշակված գրունտի բարձում ձեռքով ավտոինքնաթափերի վրա և տեղափոխում 3կմ | տ | 10,13 | 1,352 | 13,689 |
| 76 | 8--10 | Устр-во песчаной подушки под фундаменты 0.025куб.м*60 шт | Ավազե բարձիկ հիմքերի տակ 0,025*60 | խոր.մ | 0,63 | 2,253 | 1,408 |
| 77 | 33--764 | Бетонирование фундаментов опор бетоном В-12.5 | Հենասյուների հիմքերի բետոնացում B12.5 դասի բետոնով | խոր.մ | 5,63 | 20,723 | 116,567 |
| 78 | | Арматура 12А500с | Ամրան 12A500c | տ | 0,004 | 405,901 | 1,802 |
| 79 | 8--366-1 | Уст-ка поперечников из угловой стали 50*50*5мм L-0.6м | Լայնակների տեղադրում անկյունային պողպատից L-50*50*5մմ L-0.6մ | հատ | 25 | 2,613 | 65,325 |
| 80 | | Сталь угловая 50*50*5мм L-0.8м | Անկյունակ 50*50*5, L-0.8մ | հատ | 25 | 1,352 | 33,800 |
| 81 | | Болты шайбы гайки М16 | Հեղյուս մանեկ ՊնդօղակM 16 | հատ | 25 | 0,063 | 1,575 |
| 82 | | Штырь Ш1Б-К-25 | Ցցաձող Ш1Б-К-25 | հատ | 50 | 0,451 | 22,550 |
| 83 | | Изолятор ТФ-20-01 | ՄեկուսիչТФ-20-01 | հատ | 50 | 0,270 | 13,500 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 84 | 8--363-1 | Крепление одноветвевых консолей из труб d-48*3мм L-1.8մ | Բարձագների տեղադրում միաձյուղ 48*3մմ խողովակներից L-1.8մ /միաձյուղ | հատ | 25 | 14,236 | 355,900 |
| 85 | 8--409-3 | Затягивание провода сеч 1*16кв.мм медными жилами марки ПВ. | ПВ 1*16քառ.մմ հատ.պղնձե ջղերով հաղորդալարի անցկացում | 100 գծ.մ | 0,5 | 15,948 | 7,974 |
| 86 | 8--150-4 | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | Մալուխի անցկացում հենասյուների վրայով /ճոպանով/ СиП-4 3*16 | 100 գծ.մ | 8 | 30,454 | 243,632 |
| 87 | 8--149-1 | Затягивание провода сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | АВВГ 3*2.5ալյումինե ջղերով մալուխի անցկացում | 100 գծ.մ | 0,5 | 10,362 | 5,181 |
| 88 | 8--594-1 | Уст-ка светодиодных светильников 40вт для наружного освешэщения | Արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատու 40վտ | հատ | 25 | 19,574 | 489,352 |
| 89 | 15--614 | Окраска опор за 2 раза /только материал/ | Հենասյուների 2 անգամ յուղաներկման նյութերգուն 1 հատի | քառ.մ | 54,95 | 0,360 | 19,782 |
| 90 | | Ст-сть кабеля сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | АВВГ 3*2,5հատ մալուխ ալյումինե ջղերով | գծ.մ | 50 | 0,090 | 4,500 |
| 91 | | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | СиП-4 3*16հատ մալուխ | գծ.մ | 800 | 0,631 | 504,800 |
| 92 | | Ст-сть провода марки ПВ 1*16մմ | Հաղորդալար ПВ 1*16մմ | գծ.մ | 50 | 0,811 | 40,550 |
| 93 | | Зажим для соединения кабелей | Մալուխների միացմա սեղմակ | հատ | 25 | 0,014 | 0,350 |
| 94 | | Крепежные элементы для крепления кабелей | Մալուխների ամրացման ամրակ | հատ | 50 | 0,180 | 9,000 |
| 95 | | Заглушка отверстия верха стальной опоры d=110*4мм | Հենասյունի վերնամասի անցքի փակում d=110*4մմ | հատ | 25 | 0,180 | 4,500 |
| 96 | 8--418-1 | Труба гофрированная d=20мм | Ծալքավոր մեկուսիչ խողովակ d=20մմ | գծ.մ | 45 | 0,360 | 16,200 |
| | | Итого | Ընդամենը | | | | 2 677,367 |
| | | Яраберд | **Քարաբերդ** | | | | |
| | | **Строителные работы** | ***Շինարարական աշխատանքներ*** | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 97 | 33--621 | Уст-ка металлищеских опор d-108*4мм H=7м | Պողպատե հենասյուների տեղադրում d-108*4մմ H=7մ | հատ | 29,0 | 27,751 | 804,779 |
| 98 | 1--961 | Разр-ка грунта III группы вручную /в ямах/ | III կարգի բնահողի մշակում /փոսորակում/ | խոր.մ | 6,53 | 2,072 | 13,520 |
| 99 | 310-3 տ.մ.կ 29 г23--226 | Погрузка грунта яручную на а/самосвалы с перевозкой на растояние до 3км | Մշակված գրունտի բարձում ձեռքով ավտոինքնաթափերի վրա և տեղափոխում 3կմ | տ | 11,75 | 1,352 | 15,879 |
| 100 | 8--10 | Устр-во песчаной подушки под фундаменты 0.025куб.м*60 шт | Ավազե բարձիգ հիմքերի տակ 0,025*60 | խոր.մ | 0,73 | 2,253 | 1,633 |
| 101 | 33--764 | Бетонирование фундаментов опор бетоном B-12.5 | Հենասյուների հիմքերի բետոնացում B12.5 դասի բետոնով | խոր.մ | 6,53 | 20,723 | 135,218 |
| 102 | | Арматура 12A500c | Ամրան 12A500c | տ | 0,005 | 405,901 | 2,090 |
| 103 | 8--366-1 | Уст-ка поперечников из угловой стали 50*50*5мм L-0.6м | Լայնակների տեղադրում անկյունային պողպատից L-50*50*5մմ L-0.6մ | հատ | 29 | 2,613 | 75,777 |
| 104 | | Сталь угловая 50*50*5мм L-0.8м | Անկյունակ 50*50*5, L-0.8մ | հատ | 29 | 1,352 | 39,208 |
| 105 | | Болты шайбы гайки M16 | Հեղյուս մանեկ ՊնդօղակM 16 | հատ | 29 | 0,063 | 1,827 |
| 106 | | Штырь Ш1Б-К-25 | Ցցաձող Ш1Б-К-25 | հատ | 58 | 0,451 | 26,158 |
| 107 | | Изолятор ТФ-20-01 | ՄեկուսիչТФ-20-01 | հատ | 58 | 0,270 | 15,660 |
| 108 | 8--363-1 | Крепление одноветвевых консолей из труб d-48*3мм L-1.8մ | Բարձակների տեղադրում միաճյուղ 48*3մմ խողովակներից L-1.8մ /միաճյուղ | հատ | 29 | 14,236 | 412,844 |
| 109 | 8--409-3 | Затягивание провода сеч 1*16кв.мм медными жилами марки ПВ. | ПВ 1*16քառ.մմ հատ.պղնձե ջղերով հաղորդալարի անցկացում | 100 գծ.մ | 0,6 | 15,948 | 9,569 |
| 110 | 8--150-4 | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | Մալուխի անցկացում հենասյուների վրայով /ճոպանով/ СиП-4 3*16 | 100 գծ.մ | 9,5 | 30,454 | 289,313 |
| 111 | 8--149-1 | Затягивание провода сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | АВВГ 3*2.5ալյումինե ջղերով մալուխի անցկացում | 100 գծ.մ | 0,6 | 10,362 | 6,217 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 112 | 8--594-1 | Уст-ка светодиодных светильников 40вт для наружного освешэщения | Արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատու 40վտ | հատ | 29 | 19,574 | 567,648 |
| 113 | 15--614 | Окраска опор за 2 раза /только материал/ | Հենասյուների 2 անգամ յուղաներկման նյութերգում 1 հատի | քառ.մ | 63,74 | 0,360 | 22,946 |
| 114 | | Ст-сть кабеля сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | АВВГ 3*2,5հատ մալուխ ալյումինե ջղերով | գծ.մ | 60 | 0,090 | 5,400 |
| 115 | | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | СиП-4 3*16հատ մալուխ | գծ.մ | 950 | 0,631 | 599,450 |
| 116 | | Ст-сть провода марки ПВ 1*16մմ | Հաղորդալար ПВ 1*16մմ | գծ.մ | 60 | 0,811 | 48,660 |
| 117 | | Зажим для соединения кабелей | Մալուխների միացման սեղմակ | հատ | 29 | 0,014 | 0,406 |
| 118 | | Крепежные элементы для крепления кабелей | Մալուխների ամրացման ամրակ | հատ | 58 | 0,180 | 10,440 |
| 119 | | Заглушка отверстия верха стальной опоры d=110*4мм | Հենասյունի վերնամասի սնցքի փակում d=110*4մմ | հատ | 29 | 0,180 | 5,220 |
| 120 | 8--418-1 | Труба гофрированная d=20мм | Ծալքավոր մեկուսիչ խողովակ d=20մմ | գծ.մ | 52,2 | 0,360 | 18,792 |
| | | Итого | Ընդամենը | | | | 3 128,655 |
| | | Дзоракап | **Ձիթանքով** | | | | |
| | | **Строителные работы** | *Շինարարական աշխատանքներ* | | | | |
| 121 | 33--621 | Уст-ка металлищеских опор d-108*4мм Н=7м | Պողպատե հենասյուների տեղադրում d-108*4մմ Н=7մ | հատ | 30,0 | 27,751 | 832,530 |
| 122 | 1--961 | Разр-ка грунта III группы вручную /в ямах/ | III կարգի բնահողի մշակում /փոսորակում/ | խոր.մ | 6,75 | 2,072 | 13,986 |
| 123 | 310-3 տ.մ.կ 29 г23--226 | Погрузка грунта яручную на а/самосвалы с перевозкой на растояние до 3км | Մշակված գրունտի բարձում ձեռքով ավտոինքնաթափերի վրա և տեղափոխում 3կմ | տ | 12,15 | 1,352 | 16,427 |
| 124 | 8--10 | Устр-во песчаной подушки под фундаменты 0.025куб.м*60 шт | Ավազե բարձիգ հիմքերի տակ 0,025*60 | խոր.մ | 0,75 | 2,253 | 1,690 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 125 | 33--764 | Бетонировании е фундаментов опор бетоном B-12.5 | Հենասյուների հիմքերի բետոնացում B12.5 դասի բետոնով | խոր.մ | 6,75 | 20,723 | 139,880 |
| 126 | | Арматура 12A500c | Ամրան 12A500c | տ | 0,005 | 405,901 | 2,163 |
| 127 | 8--150-4 | Уст-ка поперечников из угловой стали 50*50*5мм L-0.6м | Մալուխի անցկացում հենասյուների վրայով /ճոպանով/ СиП-4 3*16 | 100 գծ.մ | 9,5 | 30,454 | 289,313 |
| 128 | 8--409-3 | Сталь угловая 50*50*5мм L-0.8м | ПВ 1*16քառ.մմ հատ.պղնձե ջղերով հաղորդալարի անցկացում | 100 գծ.մ | 0,6 | 15,948 | 9,569 |
| 129 | 8--149-1 | Болты шайбы гайки М16 | АВВГ 3*2.5ալյումինե ջղերով մալուխի անցկացում | 100 գծ.մ | 0,6 | 10,362 | 6,217 |
| 130 | 8--594-1 | Штырь Ш1Б-К-25 | Արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատու 40վտ | հատ | 30 | 19,574 | 587,222 |
| 131 | 15--614 | Изолятор ТФ-20-01 | Հենասյուների 2 անգամ յուղաներկման նյութերգուն 1 հատի | քառ.մ | 66,00 | 0,360 | 23,760 |
| 132 | 8--366-1 | Крепление одноветвевых консолей из труб d-48*3мм L-1.8մ | Լայնակների տեղադրում անկյունային պողպատից L-50*50*5մմ L-0.6մ | հատ | 30 | 2,613 | 78,390 |
| 133 | | Затягивание провода сеч 1*16кв.мм медными жилами марки ПВ. | Անկյունակ 50*50*5, L-0.8մ | հատ | 30 | 1,352 | 40,560 |
| 134 | | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | Հեղյուս մանեկ ՊնդօղակM 16 | հատ | 30 | 0,630 | 18,900 |
| 135 | | Затягивание провода сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | Ցցաձող Ш1Б-К-25 | հատ | 60 | 0,451 | 27,060 |
| 136 | | Уст-ка светодиодных светильников 40вт для наружного освешэщения | ՄեկուսիչТФ-20-01 | հատ | 60 | 0,270 | 16,200 |
| 137 | 8--363-1 | Окраска опор за 2 раза /только материал/ | Բարձակների տեղադրում միաճյուղ 48*3մմ խողովակներից L-1.8մ /միաճյուղ | հատ | 30 | 14,236 | 427,080 |
| 138 | | Ст-сть кабеля сеч 3*2.5кв.мм алюминевыми жилами марки АВВГ . | АВВГ 3*2,5հատ մալուխ ալյումինե ջղերով | գծ.մ | 60 | 0,090 | 5,400 |
| 139 | | Ст-сть кабеля марки СИП-4 3*16 с тросом | СиП-4 3*16հատ մալուխ | գծ.մ | 950 | 0,631 | 599,450 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 140 | | Ст-сть провода марки ПВ 1*16մմ | Հաղորդալար ПВ 1*16մմ | գծ.մ | 60 | 0,811 | 48,660 |
| 141 | | Зажим для соединения кабелей | Մալուխների միացման սեղմակ | հատ | 30 | 0,014 | 0,420 |
| 142 | | Крепежные элементы для крепления кабелей | Մալուխների ամրացման ամրակ | հատ | 60 | 0,180 | 10,800 |
| 143 | | Заглушка отверстия верха стальной опоры d=110*4мм | Հենասյունի վերնամասի անցքի փակում d=110*4մմ | հատ | 30 | 0,180 | 5,400 |
| 144 | 8--418-1 | Труба гофрированная d=20мм | Ծալքավոր մեկուսիչ խողովակ d=20մմ | գծ.մ | 54 | 0,360 | 19,440 |
| | | Итого | Ընդամենը | | | | 3 220,518 |
| | | **Итого** | **Ընդհանուրը** | | | | **18 300,000** |
| | | **НДС 20%** | **ԱԱՀ20%** | | | | **3 660,000** |
| | | **Итого** | **Ընդամենը** | | | | **21 960,000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Անի համայնքապետարան

ք. Մարալիկ, Մադաթյան 1

<<Կենտրոնական գանձապետարան>>

ՀՎՀՀ 05546057

Հ/Հ 900492171088

-----------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ

ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Կույբիշևի 49

<<Ինեկոբանկ>> Գյումրի մ/ճ

ՀՎՀՀ 05504189

h/h 2051222031231001

-----------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*« 8 » հոկտեմբեր 2019թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
« ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 6 ՝ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ, ՄԱՐԱԼԻԿ, ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ, ԼԱՆՋԻԿ, ՔԱՐԱԲԵՐԴ, ՋԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ /ԷԼԵԿՏՐԱԽՆԱՅՈՂ ԼԵԴ ՏԵՍԱԿԻ ԼՈՒՍԱԿԻՐՆԵՐՈՎ/ ԱՆՑԿԱՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 6 ՝ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ, ՄԱՐԱԼԻԿ, ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ, ԼԱՆՋԻԿ, ՔԱՐԱԲԵՐԴ, ՋԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ /ԷԼԵԿՏՐԱԽՆԱՅՈՂ ԼԵԴ ՏԵՍԱԿԻ ԼՈՒՍԱԿԻՐՆԵՐՈՎ/ ԱՆՑԿԱՑՄԱՆ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 20.12.2019 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Անի համայնքապետարան
ք. Մարալիկ, Մադաթյան 1
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 05546057
Հ/Հ 900492171088

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ
ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Կույբիշևի 49
<<Ինեկոբանկ>> Գյումրի մ/ճ
ՀՎՀՀ 05504189
հ/հ 2051222031231001

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

*Հավելված N 3*
*« 8 » հոկտեմբեր 2019թ. կնքված ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 19 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | |
| | | | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 45311138 | գիշերային լուսավորման ցանցի կառուցման աշխատանքներ | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Անի համայնքապետարան
ք. Մարալիկ, Մաղաթյան 1
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 05546057
Հ/Հ 900492171088

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Գյումրիի վերելակային տնտեսություն>> ԲԲԸ
ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Կույբիշևի 49
<<Ինեկոբանկ>> Գյումրի մ/ճ
ՀՎՀՀ 05504189
h/h 2051222031231001

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ